22.10.2024թ. ք. Վանաձոր

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Լոռու մարզպետին կից՝ հասարակական կազմակերպություններից և մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբի նիստի

Մասնակցում էին՝

Հովհաննես Ավետիսյան - Լոռու մարզպետի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար

Աննա Գասպարյան -Աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ, Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Ալլա Նահապետյան - Աշխատանքային խմբի քարտուղար, Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Արուս Թումանյան -Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Իրինա Մարտիրոսյան -Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Անի Բաղդասարյան -Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Ջավահիր Հակոբջանյան - «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ «Սպիտակի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող

Նարինե Ղազարյան - «Հայկական Կարիտաս» ԲՀԿ Վանաձորի «Փոքրիկ Իշխան» երեխաների խնամքի ցերեկային կենտրոնի

համակարգող, «Խաչվող ուղիներ» ՍՀԿ նախագահ

Լիլիա Աբրահամյան - Քաղաքացիական նախաձեռնությունների հեղինակ

Անուշ Ասլանյան -«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ

Գևորգ Քոթանջյան - «Ուղղակի ժողովրդավարություն» ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման ՀԿ նախագահ

Լուսինե Սարգսյան - «Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» ՀԿ ներկայացուցիչ, լրագրող

Անի Չատինյան - «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» իրավապաշտպան

Հռիփսիմե Միրզոյան - «Վիններթ Վանաձոր» ՀԿ նախագահ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ողջույնի խոսք:

(մարզպետի տեղակալ Հովհաննես Ավետիսյան)

2. Ընթացիկ ծրագրերի և համագործակցության առաջարկների քննարկում: Մարզում իրագործվող պետական, միջազգային, ՀԿ-ների ընթացիկ ծրագրերի ներկայացում:

(զեկուցող՝ Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Անի Բաղդասարյան, աշխատանքային խմբի անդամներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ):

3. Լոռու մարզի համայնքներում սոցիալ-էկոլոգիական քաղաքականությունների մշակման անհրաժեշտության և կարևորության մասին (շրջակա միջավայրի պահպանության, օրգանական գյուղատնտեսության զարգացման, աղտոտված տարածքների մաքրման, և կլիմայական դիմակայունության և հարմարվողականության ռազմավարություններ):

(զեկուցող՝ «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ, աշխատանքային խմբի անդամ Լուսինե Սարգսյան)

4. Լոռու մարզում զբոսաշրջությունն առավել գրավիչ դարձնելուն ուղղված առաջարկ- քննարկում:

(զեկուցող՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ, զեկուցող՝ աշխատանքային խմբի անդամ Անուշ Ասլանյան):

5. Մարզի, քաղաքների ճարտարապետական դիմագծի պահպանման խնդիրների վերաբերյալ:

(զեկուցող՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ, զեկուցող՝ աշխատանքային խմբի անդամ Անուշ Ասլանյան):

6. Այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ՝

1. Լոռու մարզպետի աշխատակազմի հետ համագործակցությամբ միջազգային կառույցների կողմից մարզում իրականացվող ծրագրերը՝ մասնավորապես անդրադառնալով ԼՂՀ բռնի տեղահանված քաղաքացիներին ուղղված աջակցության ծրագրերին:

2.Հասարակական կազմակերպությունների հետ սերտ գործակցությունը՝ ծրագրերը թիրախային կերպով իրականացնելու, արդյունավետություն ապահովելու, կրկնություններից խուսափելու նպատակով:

3. Լոռու մարզի համայնքներում սոցիալ-էկոլոգիական քաղաքականությունների մշակման անհրաժեշտությունը, համայնքների զարգացման 5-ամյա ռազմավարական ծրագրերում ներառված աղետների ռիսկերի կառավարման հետ կապված միջոցառումների լիարժեք իրականացումը:

4. Լոռու մարզում զբոսաշրջությունն առավել գրավիչ դարձնելուն ուղղված առաջարկներ:

5. Լոռու մարզի համայնքների ճարտարապետական դիմագծի պահպանը վերաբերող հարցեր:

ՈՐՈՇՎԵՑ՝

1. Իրականացվող ծրագրերի վերաբերյալ փոխանակվել տեղեկատվությամբ ծրագրերի կրկնություններից խուսափելու նպատակով:
2. Հետևողական մոտեցում ցուցաբերել համայնքների զարգացման 5-ամյա ռազմավարական ծրագրերում և տարեկան աշխատանքային պլաններում ներառված աղետների ռիսկերի կառավարման հետ կապված միջոցառումների իրականացմանը:
3. Հանդես գալ զբոսաշրջությունն առավել գրավիչ դարձնելուն ուղղված առաջարկներով:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՈՎԵՏԻՍՅԱՆ